Փայլուն մանուշակագույն քարը

Եթե նա ճշմարտությունն ասեր, հայրը կբարկանա՞ր նրա վրա:

Լյուսի Սթիվենսոն Իվել
(Հիմնված է իրական պատմության վրա)

Պատմությունը տեղի է ունեցել Նիդեռլանդներում:

Մարին բացեց իր զարդատուփը՝ նայելու իր գեղեցիկ քարերին: Մեկ առ մեկ նա բռնեց դրանք իր ձեռքում: Կարմիրը, կանաչը, ապա՝ ճերմակը:

Տատիկը թակեց ննջասենյակի դուռը: «Պատրա՞ստ ես գնալու»:

«Այո»: Մարին զգուշորեն քարերը նորից դրեց իր տուփի մեջ:

Տատիկը Մարիին տանում էր գրադարան: Բայց ոչ միայն պարզապես գրքեր նայելու: Այնտեղ հատուկ քարերի ցուցադրություն կար: Մարին ոգևորված էր:

Երբ նրանք ավտոբուսով հասան գրադարան, Մարին ու տատիկը ներս մտան: Նրանք տեսան գեղեցիկ քարեր ներկայացնող բազմաթիվ սեղաններ: Մի քանիսը փայլուն և հարթ էին: Մյուսները հետաքրքիր ձևեր ունեին:

«Նայիր այս մեկին»: Տատիկը մատնացույց արեց մի մեծ բյուրեղ: Այն ամբողջությամբ պատված էր դուրս ցցված փոքրիկ կապույտ սուր ծայրերով:

Մեկ այլ սեղան ներկայացնում էր բազմաթիվ փոքրիկ, կլոր քարեր: Մարին նայում էր բոլոր գույներին: Ամենավերջում կար մի մանուշակագույն քար՝ փոքրիկ, փայլուն և հարթ:



Ես դեռ չունեմ մանուշակագույն քար, մտածեց Մարին: Դա կատարյալ կլիներ նրա հավաքածուի համար:

Մարին գաղտագողի նայեց շուրջը: Տատիկը մեկ այլ սեղանի մոտ էր: Մոտակայքում ոչ ոք չկար: Եվ ոչ ոք չէր էլ նկատելու այս փոքրիկ քարի բացակայությունը, այնպես չէ՞:

Մարին վերցրեց քարը և դրեց գրպանը:

Այդ գիշեր, մանուշակագույն քարը ապահով զարդերի տուփի մեջ դրած, Մարին անկողին մտավ:

«Պատրա՞ստ ես պատմություն ունկնդրելու»: Հայրիկը նստեց մահճակալին և բացեց *Ընկեր* ամսագիրը:

Մարին կծկվեց իր ծածկոցների մեջ և լսեց: Պատմությունը մի տղայի մասին էր, որը զղջացել էր սխալ ընտրություն կատարելուց հետո:

Երբ հայրը կարդում էր, Մարին այնպիսի զգացողություն ունեցավ, կարծես ստամոքսում ինչ-որ բան էր գալարվում: Նա գլորվեց կողքի, ապա շրջեց բարձը: Սակայն իրեն լավ չէր զգում: Եվ նա չէր դադարում մտածել մանուշակագույն քարի մասին:

Հայրիկն ավարտեց պատմությունը: «Լա՞վ ես»:

Մարին չգիտեր ինչ անել: Եթե նա ասեր հայրիկին, վերջինս գուցե բարկանար:

Իսկ գուցե նա իմանար, թե ինչպես օգնել:

Մարին դանդաղ դուրս սողաց անկողնուց և իր տուփից հանեց մանուշակագույն քարը: «Այսօր ես վերցրի այս քարը գրադարանից»: Արցունքներ հոսեցին Մարիի աչքերից: «Ես իսկապես զղջում եմ»:

Հայրը գրկեց նրան: «Դու միշտ կարող ես հանգիստ ինձ ասել ճշմարտությունը: Ես հպարտ եմ քեզնով, որ ազնիվ լինելու քաջություն ունեցար»:

Մարիի փորիկում ամեն բան շտկվեց: Հայրիկը չբարկացավ:

«Եվ Հիսուսի շնորհիվ մենք կարող ենք ապաշխարել: Ճիշտ, ինչպես պատմության մեջ էր», - ասաց նա: «Ինչո՞ւ մենք քարը հետ չտանենք գրադարան»:

Մարին ամուր փակեց աչքերը: «Ոչ: Նրանք կբարկանան»:

Հայրիկը ձեռքը դրեց նրա ուսին: «Գուցե նրանք մի փոքր բարկանան: Սակայն ես կարծում եմ նրանք ուրախ կլինեն, եթե դու վերադարձնես այն: Եվ դա նաև կօգնի քեզ շատ ավելի լավ զգալ»:

Մարին խոր շունչ քաշեց և գլխով արեց: «Լավ»:

Մարին վերցրեց մի թերթիկ և սկսեց նամակ գրել: «Կներեք, որ վերցրել եմ սա»,- գրեց նա: «Կուզեի երբեք դա արած չլինեի: Ես ցանկանում եմ ուղղել սխալս»:

Նա նամակը դրեց ծրարի մեջ: Ապա ծրարի մեջ դրեց նաև փոքրիկ մանուշակագույն քարը:

«Մենք այն կվերադարձնենք վաղը», - ասաց հայրիկը: «Ինչպե՞ս ես զգում քեզ հիմա»:

«Ավելի լավ»,- ասաց Մարին: «Կա ևս մեկ բան, որ ես պետք է անեմ»:

Մարին ծնկի իջավ իր մահճակալի մոտ և աղոթեց: «Ցավում եմ, որ վերցրի քարը», - ասաց նա: Ես այլևս երբեք չեմ գողանա: Շնորհակալ եմ, որ օգնեցիր ինձ լինել համարձակ և ազնիվ»:

Երբ Մարին վերադարձավ անկողին, նա խաղաղություն զգաց: Վաղը նա ամեն բան կշտկեր: Եվ նա գիտեր, որ Երկնային Հայրը և Հիսուսը կօգնեն իրեն: Նրանց շնորհիվ ամեն ինչ լավ կլինի: ●

ՆԿԱՐԱԳՐԻՉ՝ ՔԵՅԹ ՈՒԻԼՍՈՆ